

ճշգրտութիւնը հաստատուեալ է և են տեղական ռուս-
լրագրիչները:

Պ. Ալեքսանդր Աբելեանց ԲԱՌՈՒՅՑ ռուսացական
էր մեզ արդէն մի քանի անգամ հանդիմանական
փողեր յօգուտ Բաքուի գրքերի հրատարակու-
թեան: Երկրորդ փողերի ստացանք պարտից նոյն
նպատակով դարձեալ 13 բուլլէ, որ պ. Աբելե-
անց հանդիմանական է այլ և այլ անձանց մօտ:
Ներողութիւն ենք խնդրում, որ անկարող ենք
այլ և այլ բարեգործական նպատակով հաւաք-
ված և մեզ ուղարկվող փողերի նուիրատու ան-
ձանց անունները տպագրել մեր լրագրում, քանի
որ այդ անունների ցուցակները շատ տեղ կը
լռանան «Մշակի» էջերում: Երբ որ մէկն է ու-
ղարկում որ և է նպատակով թէկուզ 1 բուլլէ,
ստորագրած ենք նրա ազգանունը յայտնել,—որի-
կերպ ինչպէս անենք: Բայց երբ որ նուիրատու-
ները ցուցակներ ենք ստանում, որքան էլ ցան-
կանայինք, անկարող ենք տպագրել այդ ցուցակ-
ները, որոնք պիտի լռանան լրագրի էջերում ըն-
թերցանելի նիւթի նշանաւոր տեղը:

ԳԱՆՁԱՒԱՅ մեզ գրում են. «Անցեալ ապրիլ ամ-
սի 21-ին մենք ակադեմիստ եղանք հետեւեալ հազ-
արկաւ օգնութիւն իրենց համար 9-ից 10 բու-
լլէ անց յայտնելով երկիրը և երկիրը լուսաւորու-
ցան, ճիշդ այնպէս, ինչպէս 6—7 օրական լուսնի
թամանակ լուսաւորողն էր մի մէկ օր, բա-
ւական մեծ, սպիտակ ձուլի էլ մեծ և ձուլի ձև ու-
նեցող, որն անցնում էր երկրի հիւսիս-արեւել-
քում: Վերջից դէպի ներքեւ Մեծօրը շարժվում
էր բաւական դանդաղ և երևում էր նոյն իսկ
ամպերի կտուրը անցնելով: Այդ հետաքրքիր եր-
ևոյթը տեսնել մի րոպէ և ապա անհետացաւ»:

Մեզ գրում են, որ մայիսի 6-ին կայացաւ
Գանձակում մեր երկրի, պ. Ն. Ծառնաւանի կօն-
ցերտը: Գանձակը լի էր և երկրից նոյնքան մեծ
աղջուկներ ունեցաւ, որքան և Բագուի մէջ իր
տուած կօնցերտներում: Նրան մատուցեց կինդա-
նի ծաղիկներից մի փունջ: Գանձակից պ. Ծառնա-
ւանից կուղարկվի թիֆլիսի և Կ. Պոլսի վրայով
դէպի խաղաղ, որտեղ, յատկապէս Նեպոլի թա-
ղաքում, պէտք է կատարելագործվի երգչուհու
թեան մէջ:

Արտասահմանի հայոց լրագիրները հաղորդում
են, որ իբրեւ թէ թէհրանի Ռուսաւորտից ընկե-
րութիւնը ձեռնարկել է այնտեղ մի տպարանի
հիմնադրութեան, և մտադր է մի հայերէն թիւթ
հրատարակել: Այդ նոյն ընկերութիւնը, ինչքան մեզ
յայտնի է, պահում է մի ընթերցարան և դպրոց,
բայց թէ կաջողվի արդեօք հայերէն մի թիւթ
հրատարակել թէհրանի նման քաղաքում,—այդ
մեզ շատ կասկածելի է թվում:

Տրապիզոնից մեզ գրում են. «Մուշից անդա-
ղար հայեր են գալիս. գալիս են Կ. Պոլիս տան-
դիմելու համար: Վերջին եկողները սրտաշարժ
տեղեկութիւններ են հաղորդում Մուշի գործադ-
րութիւնների մասին: Այդ ռուսները մեկնել են
Մուշից Զատիկից յետոյ, և այդ ժամանակ Մու-
սաբէյը շարունակում էր ասպատակել Մուշի
գաղաքը, իր ասպատակութիւնները մինչև Ալեքսան-
դրապոլսի: Գիւղացիները երկրորդ Մուշ են գի-
նում շրջակայներից: Քիւրդները գիշեր ժամանակ
յարձակվել են Արտեզ գիւղի հայերի վրա: Մը-
ղակ գիւղի տները մտնելով թալանել են Բաղէ-
շից Մուշ գնացող կառուանը կողպապել է»:

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին որ վաղը,
կիրակի, թիֆլիսի բանկային թատրոնում, «Հա-
յոսեանց Բարեգործական ընկերութեան» օգտին
հայ սիրողները կը ներկայացնեն յօրժ Օնէի
«Գարբնապետ» պիէսը, թարգմանութիւն Ս.
Արծրունու: Տոմարները ծախվում են թատրոնի
կասապուս:

«Մուրճ» ամսագրի մայիսի տետրակը հրատա-
րակվեց: Ամսագրի այդ տետրակում, որը ընդ-
հանրապէս սաստիկ անընդհանրական և անգոյն է,
իրանց վրա ուղարկութիւն են դարձնում միմի-
այն երկու, այն էլ պատահական յօդուածներ,
առաջինը՝ Լեոն Սարգսեանի «Այց թիւրքաց Հա-
յաստանին» դեղեցիկ յօդուածն է, իսկ երկրոր-
դը՝ լեզուագէտ Սարգիս Սարգսեանի լեզուագի-
տական քննութիւնն է հայոց այժմեան լեզուի
ուղղագրութեան և յատկապէս մեր լեզուի մէջ

պիւս և մուս անունների գործածութեան մասին: Սեր-
բիտաւարը լեզուագէտը շատ խելացի ուսումնա-
կան պատգովութիւններով ապացուցանում է Ղ.
Աղայեանցի, ուրեմն և «Աղբիւր» և նրանց վե-
րանորոշիչ փորձին հետեւող «Մուրճ» ամսագրի
նոր ուղղագրութեան անտեղի և ամեն հիմքից
զուրկ լինելը:

Մայիսի 11-ին, թիֆլիսի «Հայերէն» գրքերի հը-
րատարակութեան ընկերութեան» 26 անդամնե-
րի տնտեսագրութեամբ մի բողոքագիր է ներկա-
յացրած ընկերութեան վարչութեանը: Բողոքա-
գրին տնտեսագրողները, ինչպէս մեզ հաղորդում են,
յայտնում են հետեւեալը: Ապրիլի 14-ի ընդհա-
նուր ժողովը ընտրել է մէկին ընկերութեան իս-
կական անդամ, առանց վարչութեան, մինչդեռ
ընկերութեան իսկական անդամները ընտրութիւ-
նը՝ կանոնադրութեան համաձայն, պատկանում է
վարչութեանը, իսկ ընդհանուր ժողովը միմիայն
պատուաւոր անդամների ընտրութիւնն է կատա-
րում: Իսկ մայիսի 5-ի ընդհանուր ժողովում յա-
րուցանելով քարտուղարին և դրամպիսիս ռուսիկ
նշանակելու խնդիրը, ժողովը ճնշեց նոյն նիստում
վճարում է այդ հարցը, մոռանալով որ անկարելի
է նոյն ժողովում յարուցած հարցերը մի և նոյն
ժողովում վճարել: Ի նկատի ունենալով, որ այդ
բողոքը չէ համապատասխանում կանոնադրու-
թեան պահանջներին, բողոքագրին տնտեսագրող
անդամները պահանջում են ընդհանուր ժողովի
քննութեան ենթարկելու այդ հարցերը: Վարչու-
թիւնը համաձայնել է բողոքագրի մէջ առաջադ-
րած կէտերի հետ, արձանագրութեան մէջ մնաց-
նելով, որ բողոքագիրը միանշանակ իրաւացի է:

Վերջին հինգ—վեց օրվայ անընդհատ անձրևը,
ինչպէս մեզ հաղորդում են, շատ նեղ դրութեան
մէջ է դրել քաղաքը: Աղբաւ դատարանին: Յորդ
և անընդհատ անձրևից քաղաքի զանազան թա-
ղերի հին և անպէտք տները կաթում են, շատ
դէպքեր են պատահել, որ այդ տեսակ տները դա-
նալան մասերը քանդվել են, որից և մահվան
դէպքեր էլ են պատահել: Քանի քանի տարի է,
որ քաղաքային վարչութիւնը իր ճարտարապետ
ունի, որի պարտաւորութիւնն է հսկել խաբուղ
տները չը լինելու վրա,—բայց և այնպէս մի քա-
նի օրվայ անձրևը բաւական է արդէն, որ հա-
րիւրաւոր ընտանիքներ վտանգի մէջ ընկնեն, խ-
րաքանդվաւ բոլոր սպասելով, որ ահա կը քանդվի
արեւից և անձրևից պահպանելու համար շինած
կառուր: Եւ իրանց բոլորին տակ կը թողնեն...

Պետերբուրգի «Այգիգործական ընկերութիւնը»
մտադրութիւն ունի այս անգամ Պետերբուրգում
կազմել մրցույթներ ցուցահանդէս ընկերութիւնը
ցանկանում է աշխատել, որ այդ ցուցահանդէսին
որքան կարելի է շատ լինեն հարաւային Ռու-
սաստանի մրցույթներին:

Կիրակի օր, մայիսի 14-ին, ցերեկվայ ժամը
1-ին, պիտի լինի Կովկասեան Գիւղատնտեսական
ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը: Այդ
ժողովում պէտք է ներկայացվի հայիւ ընկերու-
թեան դործունէութեան և ապագործական զըպ-
րոցի 1888 թվի գործունէութեան մասին Ապա-
պ. Ն. Ծառնաւի և Մ. Կուչաւի պէտք է կար-
գան դեկուցումներ, որից յետոյ տեղի է ունենալու
խորհրդի երկու անդամների ընտրութիւնը: Այդ
ընդհանուր ժողովին ներկայ կարող են լինել և
կողմնակի անձինք:

Թիֆլիսի «Հայերէն» գրքերի հրատարակու-
թեան» ընկերութեան» խմբագրական մասնաժո-
ղովը մայիսի 11-ի իր նիստում խմբագրական
մասնաժողովի նախագահ է ընտրել պ. Յակոբ
Տիրաւեանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԲԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Եւրոպայից «Արեւելք» լրագրին գրում են հե-
տեւեալը. «Մեր քաղաքի Աղբ. վարժարանի ան-
բարեկարգ լքեալ կացութեան, ժամանակ է մը ի-
վեր շահած են և կը շահին Յիսուսեան կրօնա-
ւորը, որոց վարժարան կը յաճախեն հարիւր յի-
սուսէն աւելի հայ մանուկներ: Հայ համայնաւա-
նաց տղաները արդէն ամբողջ հոն են ինչպէս որ
հասարակութիւնն ալ կը յաճախէ ամբողջովին

նոցա եկեղեցին, և սորա համար շատ կը մտա-
տանջի հայ պապական կղերն և դարձան չը
գտնեն, զի ժողովուրդ միշտ ձերբին և նորին
հակառէտ է: Ապրիլ 16 կիրակի երեկոյն, Յի-
սուսեան կրօնաւորաց, պապական կղերն և
ժողովուրդեան ընկերակցութեամբ, որը դիմաւորած
էին քաղաքէս բաւական հեռի, հասաւ աստ Սե-
րասիւր ֆրանսիական ժողովուրդացաւոր Պ. Գլոմ
Ֆրանսիւր Սեռն: Յայտնեց օրն մեր Պատրիարքա-
կան փոխանորդ Հայրն ապելութիւն կուտայ Պ.
Հիւպատոսին: Մեծ պատուով հիւրասիրուել յի-
նոյ կը վերադառնայ: Քիչ էր լինել Պ. Հիւպատոսն
կայցելէ Աղբ. Առաջնորդարանն, ուր կընդունուի
մեծ պատուով: Այս ապելութեանց միջոցին Պ.
Հիւպատոսն միշտ կը խօսի ճշգրիտաց վրայ, կը
հարցնէ թէ Ն. Գերապատուութիւն կայցելէ եր-
բմէն Յիսուսեան կրօնաւորաց, առ որ պատաս-
խան կընդունի թէ նոցա իւր գալտեան առթիւ
իրեն ապելած հին Հիւպատոսը կը խնդրէ որ Ն.
Գերապատուութիւն միշտ բարեկամօրէն վարուի
նոցա հետ և զօտուլիւն ու առեկտուլիւն չունե-
նան միմեանց հետ: Ի պատասխանին Ն. Գերա-
պատուութիւն կըսէ թէ, «Մեր վարժարանի վեր-
ջերս ունեցած անբարեկարգ դերքէն 150 է աւե-
լի հայ մանուկներ ճշգրիտաց վարժարանը կը
յաճախեն, թէ այս բան իրեն սրտին մեծ ցաւ
եղած է ապելին տեսակէտով, թէ ինք կը բաղ-
ձայ և իր սրբազան պարտականութիւնն է բարե-
կարգելով վարժարաններն, Հայ մանուկներն հե-
ռացնել օտարաց իրթութիւնէն և Աղբ. կրթութիւն
մը տալ անոնց, որոց անշուշտ ոչ ոք կարող է
բան մըսելու»: Հիւպատոսը կըսէ, «Այո, ոչ ոք
արդէն կը լինի որ հայ մանուկներ Աղբ. կրթու-
թիւն մը առնեն, բայց անոնք, որը կամովին
ուզեն մնալ, անոնց բռնութիւն չը բանցնէր,
խնդրեմ և այլն»:

Անդիական «Մանչէսթըր» կարօտին լրագիրը
իր մայիսի 2-ի համարում խօսելով թիւրքահայե-
րի մասին, ի միջի այլոց գրում է հետեւեալը.
Գիւրեան վարդապետի մասին: Այդ պատգամա-
ւորը, որ Եւրոպայի մէջ բնակվող հայոց կայցելէ
և որս պաշտօնն էր համարել պանդը հաւատա-
ցնելով, թէ թուրքոյ մասին ինչ որ լրագրիւն-
րին մէջ կը հրատարակուին, անտեղի են, այդ
պատգամաւոր այժմ ճամբան կը շարունակէ դե-
պի Մարսէլ, ուրիւ պիտի երթայ Կ. Պոլիս: Նա
այցելելու վարձաւ, Ռուսոսը, Պաքիշ, Վիլնիս,
Բարդի, Լոնտոն և այլն, և ուր որ այցելեց,
խիստ սրտ ընդունելութիւն դուռն էրան ուղե-
ցին մէկ երկու տեղի և ծաղի ու ծանակ ըրին.
որիւ տեղից ալ հայեր յիշատակագիրներ ներ-
կայացուցին իրեն պատրիարքին հաղորդելու հա-
մար:

Մուշի մոտին անդաղար տխուր լուրեր են
գալիս և միշտ մի և նոյն ցաւը: Ահա թէ կրկին
ինչ են գրում. «Մշու արդէն միճակ յոյժ ցաւալի
կացութեան մէջ կը գտնուի հայի աղուկեան
երակէն, և այս առթիւ հարկաւոր Մշուի երկրա-
գործներ թողել իրենանց տունն ու տեղեր, մեծ
ու պղծիկ ձձիկ հոթի ու տղոր, պանդիտու-
թեան զինեցին ու կը դիմեն իւրեանց անտանիկ
ընկերութեան փոքր ինչ մեղմացնելու մտքը, եթէ
երբէք բաղդը յաղովէ այդ դժբաղդներուն: Հայ-
րենի տան մարմնացեալ թշուառութիւնն յօտա-
րութեան իսկ այդ խեղճուկներն ու թշուառները
կը հաւաքէ. միմէ փոխաճիններու ու ժողովրդեան
արին ծծող ֆայիցներու: Ներկայացուցիչը ու
դործաւատարը հոն չեն...»:

Եւրոպայէն գնացած այս տարվայ լուստաւոր-
ների մասին գրում են հետեւեալ տեղեկութիւններ.
«Այս տարի ալ լուստաւորացի հանդէսն անխու-
անցաւ Ռուստաւորացի թիւն էր 1889-ի համար
Ռուս 4000, Հայ 1000, Յայն 500, այլ և այլ
յուսնագաւանդ 500, իսպաի 200, Ասորի 100, իսկ
Եւրոպայի համարը 1500: Եւրոպացի համարը
դաց մէջ բաւական նշանաւոր անձինք կային,
շատ անգլիացի լուրեր, աւստրիացի և գերմա-
նացի իշխաններ, Պոլսոյ գաղղղական դեսպանա-
պան խորհրդակցներ, նաև Պոլսոյ առաջական դես-
պանապան առաջին թարգման և առաջին քա-
ղաքաւոր Պէտք է յիշել թէ այս տարի կարգէ
դուրս հաղովմական ամերիկացի ուստաւորաց
կարաւան մը եկաւ, 103 հոգիէ բաղկացեալ.
սորա հետ թիւն հոս եկան, և կըսուի թէ 5.000.000
ֆր. ի նուէր տուած են Պաղին: Նոյնպէս անո-
ւոր սպանիական կարաւան մը, 56 հոգիէ բաղ-
կացեալ, շատոնց ի վեր Սպանիայէն ուստաւոր
կարաւան էր գործը»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պարիզից գրում են, որ մի օրում վաճառ-
վում է աւելի քան 50.000 տոմսակ ցուցահանդէս
մտնելու:

—Ինչպէս երևում է Պարիզից եկած մի հեռա-
գրից, պանիական թագուհին տկարացել է:

—Բելգրադից գրում են, որ կառավարութիւնը
մի նորոգութեան հետեւի ուղարկեց: Նախա-
կա թագուհին նրա ծննդեան տօնի առթիւ:

—Եւրոպեան պրինցը, ինչպէս գրում են Սո-
ֆիայից, պատրաստվում է այս օրերս Պարիզ
գնալու:

—Վիեննայից հեռագրում են, որ Տիստայի մի-
նիստրութիւնը ճշմարտով մէջ է, և համոզված
են, որ նա իր վերջին օրերն է անցկացնում:

—Ինչպէս գրում են Մարիբուրցի, վերջին քան-
նութիւններից արդէն պարզ երևում է, որ պար-
լամենտական շրջաններում դաւադրութիւն է ե-
ղել պատրաստում կառավարութեան դէմ: Այդ
բանը ապագին տպագրութիւն է թողել ամբողջ
երկրի մէջ:

—Մալթայից հետեւեալն են գրում «Արեւելքին»
ապրիլի 10-ից. «Այս աւագ ուրբաթ դիշեր քաղա-
քի Մայր եկեղեցւոյ մէջ ի ժամ քաղաքութեան
նկարագրեցաւ Փրկչի կրած չարաւանքներն,
մանկուք սկսան տխրազին ողբերգի: Ամեն
կողմ խուար, ամեն սիրտ աշխար և յամենայնի
զաղար կը տրեւէ: Իւ ահա մեծ ճաղթիւն մը,
և եկեղեցւոյ վերանորոգում տախտակամբ կը փէր,
որու ներքին էին հարկաւոր արք և վրան նոյն-
չափ կանաչ: Սոսկալի տեսիլ, դուռը փոքր,
բաղմութիւն մեծ յոյժ, ընդ առաջ բաղմութեան
լի: Մահը կը հալածէր այս ժողովուրդը. փա-
խուստ, հալիւ քանի մը վայրկեան և ահա վեր-
նայարկի չորրորդ մասն ահաղին ճարձատմաւ ի
դեպի եկաւ, հեռը բերելով մի քանի հարիւր
կիներ հանդերձ մանկուքը իւրովը: Խոր լուս-
թիւնն իւր կատարեալ հակապատկերը գտնու-
հիմա տարբեր ուրեր, իրական լալիւն, և ճիւղեր
կը լսուին: Յոյժ բարեբաղդաբար կարծուածին
հակառակ շատ նուազ էր կորուստը: Մի կին
ձվուած մեռաւ և վեց կիներ վնասուած են չա-
րաչար կերպիւ»:

ԻՍՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հիւրըզնէյի «Գողովորդական առողջութեան
պահպանող» ընկերութիւնը գերմանական պար-
լամենտին մի խնդրել է անտեղի կ'օրս ա
գործածող կանաչաց վրա հարկ նշանակելու հա-
մար: «Hygien» գերմանական լրագիրը իր վեր-
ջին համարներից միում ալ փաստը հաղոր-
դելով՝ աւելացնում է որ անհրաժեշտ է տու-
ն իւր և իւր էլ հարկաւորութեան նկարագրել:

Հանգուցեալ Եւրոպին իր մահվանից մի քանի
օր առաջ գրել է իր օրվոյն մի նամակ, որի մէջ
իւրիցի այլոց հետեւեալ կտալին է անում օրվոյն.
«Ամենից շատ սիրելի քս մայրնի գրականութիւ-
նը, և զրականագրերի կոչումը նախադասութիւն
միւս կոչումներից»:

Թէ Պետերբուրգում և թէ Ռուսաստանի ուրիշ
քաղաքներում հանդիմանութիւններ են լինում
Եւրոպի մոտում գրական ֆոնդ հիմնելու և
ստիպենդիաններ պահելու համար:

Լոնդոնում ներկայումս բացված է այնպէս կոչ-
ված «Կոչիկների ցուցահանդէս», որտեղ ի ցոյց
են դրված ոչ թէ միայն բոլոր աղբերի, այլ և
պատմական զանազան շրջաններում գործած-
վող կոչիկների տեսակները: Այդ ցուցահանդէսը
կազմված է բարեգործական նպատակով—և մեծ
աղջուկիւն ունի:

Ներկայումս, երբ Պարիզի ցուցահանդէսը տ-
հագին բաղմութիւն է դրաւել, այնտեղ գնում են
և ահաղին քանակութեամբ գողեր և Վիլիքի-
ներ, ինչպէս ասում են թիֆլիսում: Դրանք մեծ
մասամբ Աղղիայից են գալիս: Նորերս այդտե-
սակ շրջաններից մէկը հետեւեալ խորամանկու-
թեան է դիմել: Վարձելով ցուցահանդէսի մօտ
մի մեծ հիւրանոց, նա դրաւ տուեց 2.000 ֆր-
անի: Հիւրանոցը մի քանի օր ցլմից հիւրե-
րով և եկեղեցիներով: Սրաւոր գողը իւրաքանչիւր
անհետում կանգնեց այսպիսի մի յայտարարութիւն.
«Չգուշ կայցել գողերից և Վիլիքիներից, որոնք
իրանց ցոյց են տալիս իբրեւ բարի ճանապար-
հորդներ: Հիւրանոցի պահողը պատասխանատու
է միայն այն իրեղենների և արժէքաւոր իրերի
համար, որոնք իր մօտ պահ են արվում: Ի հար-
կէ հիւրանոցում կենդանի պահողը պատասխանատու
օգուտ քաղել հիւրանոցի պահողի այդ տեսակ
բարի առաջարկութիւնից, և նրան յանձնեցին
իրանց բոլոր իրեղենները և փողերը... այդպէս հետ
և սրամիտ խաբեան անխիղապէս անյայտացաւ...»

Պարզիկ այս տարվայ ցուցանանքիս աջողութիւնը բոլոր սպասածներէն է գերազանցում: Ցուցանանքիս չինութիւններէ չորս կողմ խոնաված է այնքան մեծ բազմութիւն, որ կարծես չըլլի մօտակայ փողոցներում անհնարին է լինում: Ցուցանանքիս բացման առաջին 5 օրվայ ընթացքում այցելողներէ թիւը եղել է 830,412 հոգի, այն ինչ 1878 թւին առաջին տաս օրվայ ընթացքում այցելողներէ թիւը եղել է միայն 286,811 հոգի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 մայիս: Չէրնոգորայի իշխան Նիկոլայ, պրինց Գանիէլէ հետ, այսօր, կէսօրից յետոյ, ժամը 4-ին, հասաւ Պետերբուրգ: Այսօր նահանգական դատարանը սկսեց պատուաւոր քաղաքացի Բուրնակովի գործի քննութիւնը, որը մեղադրուած է իր սիրուն Դարչակի թիւնը թողնելու համար: Վկաներէ թիւը 98 է: Ժամ 30-ը չէին եկել: Մեղադրուողը յամառութեամբ մերժում է, որ ինքը յանցաւոր է:

ԲԵՐԼԻՆ, 10 մայիս: Երէկ զօրախաղ կարժիւղիւ կայսրը անձամբ կառավարում էր զօրախաղը և երկու անգամ հանդիսաւոր մարշալ զօրքը անցկացրեց Ումբրաթ թաղաւորի առջև: Կայսրունին ձիով էր, շրջապատված չքեղ թիւղնապաններով:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 մայիս: Պետերբուրգի գնալիս Չէրնոգորայի իշխան Նիկոլայ իշու Գառնիսով, որտեղ նրան զինուորացին՝ Թադաւոր կայսրը, Թադաւորացի, Մեծ իշխան Գեորգի Ալեքսանդրովիչը և Կայսերական սկիտան իշխան Նիկոլային և Թադաւորացի իշխան Գանիէլին սիրալի կերպով ողջունեց Նորին Մեծութիւնը: Իշխանը գնաց պալատը, որտեղ այցելեց Նոյա Մեծութիւններին և ապա գնաց Պետերբուրգ: Այստեղ նրան սիրալի կերպով զինուորացին Մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչը և միւս Մեծ իշխանները: Բարե տալով պատուաւոր պահանակին, իշխան Նիկոլայ ողջունեց չալովնեան ընկերութեան անդամներին, որոնց զուլս անցած էր գնեկալ իշխանին: Զասարակութիւնը և ընկերութեան անդամները բարեկեցին իշխանին:

ՎԻՊԻՆՈՎ գոյեւոր: Ապա իշխանը գնաց Չմերային պալատը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 մայիս: Այսօր, ցերեկվայ ժամը 2-ին, այստեղ հասաւ Պարսից Դաւիթ և Նիկոլայի երկաթուղու կայարանից Թադաւոր կայսրի հետ կառքով գնաց Չմերային պալատը, որտեղ հաւաքված էին պաշտօնեաները՝ Դաւիթ Նիկոլայանալու համար: Առաջին կառքից յետոյ նոյնպէս կառքով գնում էին Թադաւորացի, Չմերային թադաւորացի Գանիէլէ հետ, Կայսերական տան անդամները, և Դաւիթ սկիտան: Եղանակը հիմալի էր: Նիկոլայ պրոսպեկտի վրա խոնաված էր մեծ բազմութիւն, որը կանգնած էր տրոտուարների վրա՝ զինուորների կազմած շարքի ետեւ: Դաւիթ այստեղ մնալու ամբողջ ժամանակ քաղաքը զարդարված պիտի լինի զօրախաղով, իսկ երեկոյաները՝ քաղաքը լուսաւորված պէտք է լինի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 մայիս: Երէկ երեկոյան Չմերային պալատում հանդիսաւոր ճաշ տրվեցաւ 180 հոգու համար: Բարձրագոյն սեղանի վրա դրված էին ոսկու ամաններ Թադաւոր ալ կողմը նստած էր պարսից Դաւիթ, ձախ կողմը՝ Չէրնոգորայի իշխանը: Թադաւորը նստած էր Թադաւորի զինացի Դաւիթ ժամանակ Թադաւոր առաջարկեց Դաւիթ կենացը, որի ժամանակ ամբողջ լսվեց թնդանթածկութիւն. ապա Դաւիթ առաջարկեց Թադաւորի կենացը: Այսօր Դաւիթ Պետերբուրգի գնում էր այստեղից ճանապարհ կենցիկի, երկր, կիրակի: Դա ժամապրոցիւն ունի հանդիսաւոր առնել Վիլնոսում և Վարշաւայում: Ներքին գործերի մինիստրի օգնական իշխան Գադարին սենատոր է նշանակված: Կովկասի նաւաշինութեան կոմիտէի նախագահ Տիւր իր ինդիքը համաձայն արձակված է ծառայութիւնից: «Journal de St. Petersburg» լրագիրը մատնացոյց անելով Բարձրագոյն Պալատի և մայրաքաղաքի ազգայնականութեան կողմից Դաւիթ արած սիրալի ընդունելութեան վրա, ասում է, որ Ռուսաստանը խոստովանում է այդ լուսաւորեալ թաղաւորի Պարսկաստանին արած ծառայութիւնները և համոզված է, որ հաստատուն և անկեղծ դիտարկութիւն կայ մօտեցնել և հաստատ հիմքի վրա գնել հարեանական բարի յարաբերութիւնները, որոնք պէտք է դրուել ռուսներին երկու կառավարութիւնների և նրանց ժողովուրդների մէջ: Պէտք է յուսաւ, որ Դաւիթ նոր այցելութիւնը կը նպաստէ այդ բարեկամութեան ամրապնդման:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կիրակի, մայիսի 14-ին, նախկին Արծրունու թատրոնում ԹԱՏՐՈՆԱՍԵՐՆԵՐԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ «ԴԱՐՔԱՊԵՏ» (Le maître des forges) Ժողով Ենի, Թարգ. Ս. Արծրունու: Մասնակցում են՝ տ.տ. Ս. Բալանթարեան, Կ. Եւանդուլեան, Զ. Աւետիսեան, Ե. Նազարեան, Ս. Մեղրեան, Ս. Մեղրեան, Կ. Ս. Մամիկոնեան, Ալլակերեան, Տիգրանեան, Մանգինեան, Մեղրեան-Արամեան, Մեղրեան-Ալլակերեան, Թարսանեան, Օրբելի:

Տոնակները ծախվում են թատրոնի կասայում:

2—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

ՆԱԽԱԱՐԻՆԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, (և տառամնացաւ), սիֆիլիսի և աչքի ց. բացի կիրակի:

ԲՈՒԳԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲՅՈՒՇԿԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԻՆՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի:
ԱՐՏԵՄԻՆՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՈՒՄՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի:
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտրակալ):
ԲԵՆԿԻՆՎՍԿԻ—6 1/2—7 1/2 ժամ.
Հիւանդանոցում է մահն կարգաւոր Մօզէր և Երեանցեան:

Վճար—50 կ. Համախորհրդի (Կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի վերահսկող ՆԱԽԱԱՐԻՆԱՆ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Հիւղաբաթի, մայիսի 25-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին, Բաթումում Լէմոյիւրի տան, Նաբեքէժնայա, և Թիֆլիսում նախկին Արծրունի գալլերեան, № 114.

1—2 (13-18)

Недавно приѣхалъ въ Тифлисъ

ДАНТИСТЪ ВАЛЛАКЪ

А МЕРИКАНЕЦЪ

Докторъ зубной хирургіи Бальтиморскаго Зубоврачебнаго училища въ АМЕРИКѢ, членъ Французскаго Зубоврачебнаго общества въ ПАРИЖѢ и имѣющій дипломъ Дантиста изъ ДЕРПТСКАГО университета.

Принимаетъ больныхъ по зубнымъ боѣзнямъ ежедневно отъ 9 часовъ утра до 5 часовъ вечера у себя на квартирѣ, на СОЛОЛАКСКОЙ улицѣ, домъ протоіерея ОРБЕЛИ, № 16.

ՆՈՐԵՐՈՒՄՍ ՀԱՍԱԻ ԹԻՖԼԻՍ

Ա Մ Ե Ր Ի Կ Ա Ց Ի

ԱՏԱՄՆԱԲՈՑԻ ՎԱԼԼԱԿ

Դօկտօր տառամնարուժութեան Ամերիկայի ԲԱԼՏԻՄՈՐ քաղաքի տառամնարուժական դպրոցի, անդամ ՓԱՐԻՋի տառամնարուժական ընկերութեան: Պ. Վալլակ ունի տառամնարոյթի զբաղմունքի համար համալսարանից:

Ընդունում է տառամնարի ցաւով հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 5 ժամ կէսօրից յետոյ, իր բնակարանում, Սոլոլակի փողոցում, առաջ քահանայ Օրբելիի տանը, № 16

3—10 (2)

ՀԱՂՈՒԵԿՂԻԹ

Թ Ի Յ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

91-Ն Մայիսի 1889

Պ Ա Հ Ա Ն Ջ Ք	Թիֆլիսում	Բազուի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	55,680—08	39,496—14	95,176—22	1. Հիմնական դրամադրուս.....	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	2,465—17	190,000 —	192,465—17	2. Պահեստի դրամադրուս.....	165,571—28	—	165,571—28
3. Չեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորադրութեամբ.....	2,637,759—95	866,247—73	3,504,007—68	3. Դրամական աւանդներ՝			
4. Չեղջումն մուրհակաց մէկ ստորադրութեամբ, ապահոված ապրանքներով.....	—	—	—	ա) Պայմանաւորով.....	1,723,543 —	93,997 —	1,817,540 —
5. Չեղջումն ստորադրեր թղթ., կտրօն. և այլն.	20,282—75	5,961 —	26,243—75	բ) ց'Պահանջ.....	202,182 —	28,005 —	230,187 —
6. Փոխառութիւն դրամականով՝				գ) Ընթացիկ հաշիւով հասարակ.....	862,143 07	466,124—06	1,328,267 —
ա) Պետութիւնից սպաւ. տոկոսաւ. թղթերի.	963,853—05	265,649 —	1,229,502—05	դ) պայմանաւոր.....	—	92,588—48	92,588—48
բ) » ոչ սպաւ. » »	152,300 —	8,455 —	160,755 —	4. Չեղջումն մուրհակաց պետական բանկայի թիֆլիսի բաժնում.....	313,066—41	—	313,066—41
գ) ապրանքների » »	—	39,253 —	39,253 —	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և ստորադրեր թղթերով.	249,000 —	—	249,000 —
դ) Ոսկւոյ և արծաթի » »	—	450 —	450 —	6. Թղթակցներ՝			
7. Բանկի պատկանակ ստոկոսաւեր թղթեր.	350,714—42	33,088—17	383,802—59	ա) Նոյա հաշիւը (Loro).....	1,854,860—94	—	1,854,860—94
8. Ոսկի և արտասահմանի փոխանակադրեր.	32,937—19	—	32,937—19	բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	2,679,917—08	—	2,679,917—08
9. Թղթակցներ՝				գ) Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութ. հետ.....	—	763,765—18	763,765—18
ա) Նոյա հաշիւը (Loro).....	2,011,482—90	—	2,011,482—90	դ) Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօններ բաշխել 1882, 83, 84, 85, 86 և 87 թ.	58,505—90	—	58,505—90
բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	2,363,103—19	—	2,363,103—19	9. Չը վճարուած տոկոսներ, աւանդներ, ընթացիկ հաշիւներ և այլ գործողութեանց.....	18,846—66	—	18,846—66
10. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութեան հետ.	700,790—55	—	700,790—55	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ.....	57,809—58	7,249—48	65,059—06
կենտրոն. վարչութեան հաշիւը բաժնի հետ.	—	52,262—60	52,262—60	11. Փոխանցիկ գումարներ.....	118,342—37	54,841—74	173,184—11
11. Բողոքուած մուրհակներ.....	7,594—10	—	7,594—10	12. Արդիւնք.....	24,753—77	10,065—05	34,818—82
12. Պայմանաւոր անցուցուած փոխառութիւններ.....	6,740 —	6,656 —	13,396 —				
13. Ընթացիկ ծախսեր.....	15,984—02	5,457—66	21,441—68				
14. Կահկարասիք և սկզբնական ծախսեր.....	3,115—36	2,520—39	5,635—75				
15. Յետ ստացուելիք ծախսեր.....	3,739—33	1,139—30	4,878—63				
Բ. Ա.	9,328,542—06	1,516,635—99	10,845,178—05	Բ. Ա.	9,328,542—06	1,516,635—99	10,845,178—05